Տոնենք

Լեզուների եվրոպական օրը

միասին սեպտեմբերի 26-ին

Ինչ է Լեզուների եվրոպական օրը

Լեզուների եվրոպական օրվա նպատակն է խրախուսել լեզուների ուսումնառությունը ողջ Եվրոպայում:

Եվրախորհրդի նախաձեռնությամբ 2001 թվականից ի վեր Լեզուների եվրոպական օրը նշվում է ամեն տարի՝ սեպտեմբերի 26-ին:

Որն է ԼԵՕ-ի նպատակը

- Հանրությանը իրազեկել լեզուների ուսուցման և լեզվական բազմազանության կարևորության մասին՝ խթանելով բազմալեզվությունը և միջմշակութային փոխըմբռնումը:
- Խթանել և պահպանել Եվրոպայի լեզվական և մշակութային հարուստ բազմազանությունը:
- Խրախուսել լեզուների շարունակական ուսուցումը դպրոցում և դպրոցից դուրս:

Արդյոք դուք գիտեք, որ

- Աշխարհում գոյություն ունեն 6000-ից 7000 լեզուներ, որից մոտավորապես 225-ն են բնիկ եվրոպական լեզուներ:
- Աշխարհում լեզուների բազմազանությամբ աչքի են ընկնում Ասիան և Աֆրիկան:
- Աշխարհի բնակչության առնվազն կեսը երկլեզու է կամ բազմալեզու / նրանք կարողանում են խոսել և հաղորդակցվել երկու կամ ավելի լեզուներով: /
- Երկլեզվությունը ավելի դյուրին է դարձնում այլ լեզուների ուսումնառությունը և խթանում է մտածողության գործընթացը:

Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել մեր կայք՝ www.coe.int/edl

Ում համար է նախատեսված ԼԵՕ-ն?

- Աշակերտներ/ուսանողներ/ուսուցիչներ
- Համալսարաններ/դպրոցներ/ մշակութային և լեզվական հաստատություններ

Այլ կերպ ասած, այն իր մեջ ներառում է բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված են լեզվական բազմազանությամբ Եվրոպայում:

www.coe.int/EDL

Միացեք մեր ֆեյսբուքյան էջին՝
facebook.com/ecml.celv

EUROPEAN CENTRE FOR MODERN LANGUAGES
ECML CELV
CENTRE EUROPEEN POUR LES LANGUES VIVANTES

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Տոնենք Լեզուների եվրոպական օրը միասին սեպտեմբերի 26-ին

Ինչ կարող եք գտնել ԼԵՕ-ի կայքում

- Իրադարձությունների ցանկ, որն իր մեջ ներառում է այն բոլոր միջոցառումները, որոնք իրականացվում են ամբողջ աշխարհով մեկ ԼԵՕ-ն նշելու համար:
- ԼԵՕ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ ներկայացված ավելի քան 20 լեզուներով
- Փաստեր լեզուների մասին
- Առցանց խաղեր ձեր գիտելիքները և հմտությունները ստուգելու համար
- Դարձվածքներ, զվարճալի բառեր, ամենից երկար բառեր, բառախաղեր և բազմաթիվ այլ օրինակներ Եվրոպայի հարուստ լեզվական բազմազանության վերաբերյալ

Ինչպես ներգրավվել այս գործընթացին?

Անդամ երկրները, գործընկերները և անհատները կարող են ազատ կերպով կազմակերպել օրվա առթիվ միջոցառումներ՝ օգտվելով ԼԵՕ-ի կայքից և այնտեղ տրամադրվող օժանդակ նյութերից:

Որոշ մտահղացումներ

- Կազմակերպեք լեզվին նվիրված որևէ միջոցառում(մրցաշար, ճաշ, խնջույք)
- Ստեղծեք լեզուներին նվիրված բլոգ
- Կազմեք ձեր անհատական լեզվական թեստը ձեր ուսանողների, դպրոցի, հարևանների համար
- Կազմակերպեք երգի, գրելու մրցույթներ կամ խաղեր
- Պատրաստեք բացիկներ, պաստառներ, նկարներ

Ձեր միջոցառումը կարող եք ցուցադրել՝ մուտքագրելով այն ԼԵՕ-ի կայքի տվյալների բազա:

Հավելյալ գաղափարների և նյութերի համար կարող եք օգտվել հետևյալ կայքից՝ http://edl.ecml.at/teachshare.

Ով է ԼԵՕ-ի համակարգողը

Լեզուների եվրոպական օրը համակարգվում է Եվրախորհրդի կողմից /մասնավորապես Լեզվաաղաքականության բաժին (Ստրասբուրգ) և Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոն (Գրաց)/:

Ազգային համակարգողները աջակցում են ԼԵՕ-ի վերաբերյալ տեղեկատվություն տարածմանը ավելի քան 40 երկրներում:

Ազգային համակարգող՝

Եվրախորհրդի լեզվակրթական ծրագրերի իրականացման կենտրոն